

# ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՊՀ անսեռազիտուրյան  
ֆակուլտետի մագիստրոս

### ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՍՏԱԿԱԾՐՁԱՆԻՑ

Յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման, ինչպես նաև տարաբնույթ առջակ-տնտեսական հիմնախնդիրների լուծման կարևոր նախապայման է համարվում պետական եկանուտների հավաքագրման ուղղությամբ արդյունավետ քաղաքականության իրականացումը։ Չնայած այն համգանձնանքին, որ պետական բյուջեի եկանուտները դասակարգվում են մի քանի խճերերի, այդուհանդեռ, դրանց շարքում իրենց տեսակարար կշռով և կարևորությամբ առանձնանում են հարկային եկանուտները։ Սա ենթադրում է պետության ֆինանսական խնդիրների լուծման և տնտեսության զարգացման համար անհրաժեշտ խրանիների ստեղծմանն ուղղված հարկային քաղաքականության մշակում և իրականացում, քանի որ, ըստ էության, դրանից է ողղակիորեն կախված պետության գործառույթների պատշաճ իրականացմանն անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորումը։ Տնտեսության ընդհանուր ճգնաժամի պայմաններում տնտեսական անկման կասեցման և զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման գործում և խիստ մեծանում է արդյունավետ հարկային քաղաքականության մշակման ու իրականացման նշանակությունը։ Այդ առումով, հատկապես կարևորվում են հարկման պայմանների և ռեժիմների ձևավորման հարցերը, որոնք իրենց որոշակի ազդեցությունն են ունենում հասարակական ֆինանսների կողմից իրականացվող գործառույթների վրա։ Իրավիճակի բարդությունն այն է, որ անցումային տնտեսությամբ պայմանավորված խնդիրներին զուգահեռ, հարկային նույտերի հավաքագրմանը կոչված պետական ինստիտուտները դեռևս բավարար մակարդակով ձևավորված չեն։ Բացի այդ, շուկայական ինստիտուտների թերզարգացման պայմաններում խիստ սահմանափակվում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ բացառվում է զարգացած շուկայական տնտեսություններում արդյունավետորեն գործող հարկման ընթացակարգերի և մեխանիզմների կիրառումը։

Գոյություն ունի մեկ այլ հիմնախնդիր ևս. անցումային տնտեսությունները վերափոխումների փուլում մեծ ծախսերի կարիք ունեն, որը կարելի է բացատրել հետևյալ պատճառներով։ Մի կողմից՝ պետությունը ժառանգում է նախկին համակարգի պարտավորությունները, որոնցից կարձ ժամանակահատվածում հնարավոր չեն հրաժարվել, թեև դրանք որոշ դեպքերում ոչ

արդյունավետ ծախսեր են: Մյուս կողմից՝ պետական կառավարման համակարգի բարեփոխումները ժամանակ և ծախսեր են պահանջում, և, մինչ այդ գործընթացի ավարտը, դրանց գործունեությունը ոչ արդյունավետ է: Վերջապես, շուկայական տնտեսության պահանջները բավարարող և պետության հիմնական խնդիրների լուծումն ապահովող ինստիտուտների ստեղծումը կարող է իրականացվել որոշակի ժամանակահատվածում:

Նախկին միութենական հանրապետություններում ստեղծված իրավիճակն ունի որոշակի յուրահատկություններ: Այդ երկրներում 1960-1980-ական թվականներին հարկային եկամուտների հիմնական աղբյուրը ձեռնարկությունների շահույթից վճարումներն էին. շրջանառության հարկը, եկամտահարկը և արտաքին առևտորի նկատմամբ սահմանված հարկը: Անգամ այս պարագայում 80-ականների կեսերին բյուջեի հարկային մուտքերը զգալիորեն նվազեցին: Դա կապված էր առաջին՝ տնտեսության ազատականացման և աշխատանքի շահամիտման մակարդակի բարձրացման փորձերով պայմանավորված հարկային բեռի նվազեցման, ինչպես նաև ձեռնարկություններին շահույթի ավելացմանը շահադրդելու հետ: Սակայն նման քաղաքականությունը շապահովեց հարկային եկամուտների ավելացում, այլ, ընդհակառակը, հանգեցրեց պետական ձեռնարկությունների նկատմամբ վերահսկողության նվազեցմանը, ինչն էլ, իր հերթին, նպաստեց շահույթից բյուջե կատարվող վճարումների կրծատմանը:

Երկրորդ՝ արտաքին շուկաների ոչ բարենպաստ իրադրությունը (կոնյունկտուրան) 80-ական թվականների վերջին պատճառ դարձավ էներգակիրների արտահանումից ստացվող պետական եկամուտների նվազեցմանը մոտ երկու անգամ (տասնամյակի սկզբի համեմատությամբ): Բացի այդ, ներմուծմանը փոխարինող արտադրությունների զարգացման նպատակով սկսեց իրականացվել ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի կրծատմանն ուղղված քաղաքականություն, ինչի հետևանքով տեղի ունեցավ ներմուծման տուրքերից ստացվող մուտքերի նվազում:

Հարկերի հավաքագրման հետ կապված հիմնախնդիրների խորացմանը զուգահեռ, նախկին միութենական հանրապետություններում տեղի ունեցավ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացում: Զնավորված աշխարհաքաղաքական իրավիճակը և գների մակարդակի նկատմամբ վերահսկողության բուլացումը նույնականացնելու ազդեցին հարկային մուտքերի շարժընթացի վրա: Դա, մասնավորապես, վերաբերում էր շրջանառությունից հարկին, որից ստացվող մուտքերը 1990-1991 թվականներին կտրուկ նվազեցին: Նշված գործոնները հանգեցրին հարկային քաղաքականության խստացման ուղղությամբ մի շարք միջոցառումների իրականացմանը՝ մասնավորապես սոցիալական ապահովագրությանը կատարվող մասհանումների կտրուկ ավելացմանը և ձեռնարկությունների կողմից արտաքույթով ստացվող հասույթի որոշակի մասի պարտադիր վաճառքի կարգի սահմանմանը: Սակայն նշված միջոցառումների գերակշիռ մասը չտվեց ցանկալի արդյունք, և նորանկախ հանրապետությունները բախվեցին հարկարյութետային համակարգերի բարեփոխման կենսական անհրաժեշտությանը: Սուտավորապես նման իրավիճակ էր տիրում Հայաստանի Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների սկզբնական փու-

լում, և, այդ առումով, ակնհայտ դարձավ, որ շուկայական հարաբերությունների ձևավորման ուղղությամբ իրականացվող համալիր տնտեսական քարեփիխումները պետք է ներառեին նաև հարկաբյուջետային համակարգը: Տնտեսական ազատականացման սկզբնական ժամանակահատվածում գործող հարկային համակարգն աչքի էր ընկնում արտոնությունների մեծ շրջանակով, ինչը, ըստ էության, դրա գործունեության արդյունավետության վրա բացասաբար ազդող գործոն էր: Վերջինս, նվազեցնելով հարկային քաղաքականության բափանցիկությունը, միաժամանակ բարդացնում էր տվյալ ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը՝ հնարավորություն ստեղծելով տարբեր ձևերով խուսափելու հարկերի վճարումից: Արտոնությունների լայն շրջանակը, հանգեցնելով բյուջետային մուտքերի կրճատմանը և, դրանով իսկ, նաև պետության կողմից սեփական գործառությունների լիարժեք կատարման հնարավորությունների սահմանափակմանը, շատ դեպքերում չեր նպաստում դրանց տրամադրման համար սահմանված նպատակների իրագործմանը: Նման իրավիճակը չեր կարող ապահովել տնտեսական համակարգում գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծումը: Ավելին, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, անցումային տնտեսությանը բնորոշ խնդիրներն առավել հեշտությամբ լուծվում են հարկային պարզ և արտոնությունների նվազագույն ընդգրկում ունեցող համակարգերի միջոցով: Հետագայում, շուկայական ինստիտուտների և կառույցների զարգացմանը զուգընթաց, հնարավորություն է ստեղծվում կատարելագործելու հարկային համակարգը՝ կիրառելով զարգացած շուկայական տնտեսություններում արդյունավետորեն գործող մեխանիզմները:

Տնտեսական ազատականացման սկզբնական ժամանակահատվածում, վերը նշված գործուների հետևանքով, հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը, օրյեկտիվորեն, պետք է նվազեր, ինչը պայմանավորված էր մի շարք պատճառներով.

Առաջին՝ երկրում առկա քաղաքական անկայունության պայմաններում, որպես կանոն, նվազում են պետական մարմինների պատրաստակամությունը և ընդունակությունը հարկերի գանձման առնչությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկերի հավաքագրման առումով խնդիրներ առաջանում են հատկապես այն դեպքերում, երբ պետական իշխանությունը բույլ է, և առկա է ներքաղաքական անկայունություն<sup>1</sup>:

Երկրորդ՝ հանրապետության բյուջեի մշտական բնույթ կրող անհաշվեկշռվածությունը հանգեցնում էր բյուջետային պարտքերի կուտակմանը, ինչն էլ, իր հերթին, պատճառ էր դառնում տնտեսությունում փոխադարձ շվճարումների, այդ թվում՝ հարկային ապառքների կուտակման:

Երրորդ՝ հարկային գանձումների ծավալը պայմանավորող կարևոր գործոն է սահմանված մակարդակից ավելին հավաքելու պետության սահմանափակ հնարավորությունները: Զարգացած երկրների վորձը ցույց է տալիս, որ գոյություն ունի որոշակի կասպ երկրի տնտեսական զարգացման և տնտեսության վրա հարկաբյուջետային ճնշման աստիճանների միջև:

<sup>1</sup>Տե՛ս Մ. Գևորգյան, Ա. Թօմազյան, Հայաստանի անցումային տնտեսությունը, Եր., 1997, էջ 48:

Որպես կանոն, տնտեսապես առավել զարգացած երկրներն ի վիճակի են բյուջեի միջոցով վերաբաշխելու ստեղծվող արժեքի մեծ մասը: Արդյունքում՝ հարկերի հավաքագրման հնարավոր մակարդակը պայմանավորվում է այնպիսի գործուներով, ինչպիսիք են տնտեսության կառուցվածքը, բնակչության կրթական մակարդակը, հարկային վարչարարության զարգացման աստիճանը, քաղաքացիների օրինապահության ընդհանուր մակարդակը և հասարակությունում ձևավորված՝ հարկերի վճարման ավանդույթները:

Անցումային տնտեսությամբ երկրներում բյուջեի հարկային եկամուտների ծավալի վրա լուրջ ազդեցություն են ունենում տնտեսական վերափոխումների տեմպերը: Նման կախվածությունը պայմանավորված է նրանով, որ ֆինանսական մեղմ քաղաքականության պայմաններում լայն տարածում են ստանում բարտերը և փոխսարած չվճարումները, որոնք բացասարար են անդրադառնում հարկահավաքման ծավալների վրա: Միաժամանակ, տնտեսական գործակալների շրջանում ձևավորվում են վարքագծի այնպիսի կանոններ, որոնք անհամատեղելի են հարկային բարձր կարգապահության պահանջների հետ և հանգեցնում են հարկերի վճարումից խուսափելու օրինական և անօրինական հնարավորությունների ընդլայնմանը:

Նման պայմաններում խիստ հրատապ է դառնում հարկային բարեփոխումների իրականացումը, որի նպատակը պետք է լինի ոչ այնքան հարկային եկամուտների ավելացումը և, դրանով իսկ, բյուջետային միջոցների սահմանափակության խնդրի լուծումը, որքան տարրեր տնտեսական իրավիճակներում գտնվող հարկատուների նկատմամբ հարկային համակարգի արդարացիության (պետք է բացառել այնպիսի իրավիճակները, երբ հարկատուների որոշ խմբեր կրում են հարկային բեռի ամբողջ ծանրությունը, իսկ մյուսները օրինական և ոչ օրինական ճանապարհներով խուսափում են հարկերի վճարումից), միաժամանակ՝ սպառողների և տնտեսավարող սուբյեկտների որոշումների նկատմամբ չեզորության ապահովումը:

Կենտրոնացված կառավարման համակարգից շուկայական հարաբերություններին անցման փուլին բնորոշ են մի շարք խնդիրներ, որոնց շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են շուկայական պայմաններին ներդաշնակ հարկային քաղաքականության մշակումն ու արդյունավետ համակարգի ձևավորումը: Տնտեսական գործընթացներում, պետության դերի վերաբինատավորմանը զուգահեռ, նոր հարթություն են տեղափոխվում նաև հարկային քաղաքականության, ինչպես նաև վարչարարության դերն ու խնդիրները:

Ընդհանուր առնամբ, հարկային քաղաքականության արդյունավետությունը զնահատվում է՝ ենթալով վերջինիս կողմից պետության առջև ծառացած խնդիրների լուծման ընդունակությունից և հնարավորությունից<sup>2</sup>: Դա մեծապես կախված է հարկային վարչարարության արդյունավետությունից: Հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում արդարացի և արդյունավետ թվացող հարկային հանակարգը բույլ զարգացած հարկային վարչարարության հետևանքով դառնում է անարդյունավետ: Հարկային վարչարարության արդյունավետությունը հարկային քա-

<sup>2</sup> Տե՛ս Գ. Կիրակոսյան, Հարկարացիութեային քաղաքականության զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2000, էջ 24:

դաքականության կատարելագործման հիմնական ուղիներից մեկն է: Հետևաբար՝ հարկային քաղաքականության բարելավումն առանց վարչարարական խնդիրների բացահայտման և հետևողական լուծման դառնությունը է գրեթե անհնարին:

Պետք է նշել, որ անցումային տնտեսությամբ երկրներում հարկային համակարգն իր վրա կրում է մի շարք գործոնների ազդեցությունը: Այս առումով, մշակող և իրականացվող հարկային քաղաքականությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով և հիմնախնդիրներով, որոնց լուծմամբ է պայմանավորված հարկային համակարգի արդյունավետության բարձրացումը: Վերջիններս կարելի է խմբավորել հետևյալ կերպ:

- ստվերային տնտեսության ծավալների կրճատման հաշվին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների մակարդակի բարձրացում, հարկատուների շրջանում պետության հանդեպ պարտավորությունների կատարման գիտակցության արմատավորում, հարկային վարչարարության արդյունավետության մեծացում,

- հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի հարկերի տեսակարար կշռի աստիճանական ավելացում, եկամտահարկի և շահութահարկի հաշվարկման և գանձման ճկուն մեխանիզմների ներդրում, տնտեսավարող սուբյեկտների գործունեության շահութաբերության մակարդակի բարձրացում,

- հարկային համակարգի համալիր բարեփոխումների իրականացում և, այդ համատեքստում, հարկային վարչարարության կատարելագործման ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ նոր մոտեցումների մշակում ու կենսագործում, վարչարարական ծախսերի նվազեցում:

Վերը նշվածին գուգահեռ, անհրաժեշտ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Անցումային տնտեսության պայմաններում իրականացվող հարկային քաղաքականությունը, որպես կանոն, հիմնականում իրավիճակային խնդիրների լուծման նպատակ է հետապնդում: Սակայն նման մոտեցումը ֆիսկալ տեսանկյունից կարող է միայն կարճաժամկետ հատվածում հանգեցնել բյուջետային մուտքերի ավելացմանը: Նշված հանգամանքից ելնելով՝ երկիր երկարաժամկետ զարգացման անհրաժեշտությունը պահանջում է հարկային բարեփոխումների ընթացքում միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության մշակում՝ ուղղված հեռանկարային խնդիրների լուծմանը: Այսպիսով՝ զարգացման ներկա փուլում հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է հաշվի առնի վերը նշված առանձնահատկությունները և ուղղված լինի պետության ֆիսկալ նպատակների իրացման և տնտեսավարող սուբյեկտների գործունեության ծավալների ընդլայնման անհրաժեշտության միջև հաշվեկուվածության ապահովմանը:

Անկախ տնտեսավարման համակարգից՝ հարկային քաղաքականության հիմնական նպատակը պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների հավաքագրումն է<sup>3</sup>: Այս առումով, շուկայական տնտեսության պայմաններում կարևորվում է դրա իրա-

<sup>3</sup> Տե՛ս Վ. Բոստանջյան, Տնտեսական բարեփոխումները ՀՀ-ում և դրանց օրենսդրաբարավական ապահովածության հիմնախնդիրները, Եր., «Էկոնոմիկա», N 4, 1999:

կանացումն այնպիսի մեխանիզմներով և եղանակներով, որոնք նվազագույնի կիացնեն շուկայում տնտեսավարող սուբյեկտների վարքագծի և նրանց կողմից ընդունվող որոշումների վրա հարկման ազդեցությունը: Հարկային համակարգի հիմնական սկզբունքներից մեկը պետք է լինի հարկային օրենսդրության համատարած կիրառման ապահովումը, հարկային պարտավորությունների ճիշտ գնահատումն ու վարչարարական նվազագույն ծախսերով հարկերի հավաքագրումը: Այլ կերպ ասած՝ հարկային համակարգի հիմնական խնդիրը հարկային վճարումների գծով բյուջետային փաստացի մուտքերի համապատասխանեցումն է հարկման ներուժային մակարդակին: Ակնհայտ է, որ տնտեսության տարբեր ճյուղեր և ոլորտներ ունեն զարգացման իրենց առանձնահատկությունները, ինչը ենթադրում է հարկային քաղաքականության տարբերակված մուտքումները: Այս առումով, առաջիկայում հանրապետությունում հասող ուշադրության պետք է արժանանա գյուղատնտեսության ոլորտի հարկման մեխանիզմների մշակման հարցը: Կարծում ենք՝ տվյալ խնդիր լուծումը բավականաչափ բարդ է՝ պայմանավորված, մի կողմից, ոլորտի խոցելիությամբ, առկա հիմնախնդիրների բազմազանությամբ և արտաքին միջավայրից մեծ կախվածությամբ, մյուս կողմից՝ վարչարարական բարդություններով, հարկման մշակույթի բացակայությամբ և մի շարք այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններով: Ներկա փուլում առաջնային են դառնում գյուղատնտեսության ոլորտի հարկման խնդիրները, ինչը պայմանավորված է միջազգային միասնացման (ինտեգրման) հարաբերությունների խորացման, ինչպես նաև հարկային բենի հավասարաչափ բաշխման անհրաժեշտությամբ: Ուշագրավ է տվյալ ոլորտում կուտակված միջազգային փորձը, որի համակողմանի ուսումնակիրությունը և հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունների բացահայտումը կարող են նպաստել հարկման արդյունավետ մեխանիզմների ներդրմանն ու կիրառմանը:

Հարկային համակարգի գործունեության արդյունավետության մասին վկայող ցուցանիշ է հանարվում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, որը հանրապետությունում խիստ ցածր է տարբեր՝ անզամ սոցիալ-տնտեսական զարգացման նման պայմաններ ունեցող երկրների համեմատությամբ: Սակայն պետք է նշել, որ մեր երկրում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության իրական ցուցանիշն այլ է՝ մի շարք հանգամանքներով պայմանավորված: Այսպես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, «Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է»: Մինչդեռ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիլիենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցու-

թյուններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»: «Հետևաբար՝ պետական տուրքը չի կարող դիտվել որպես հարկային եկամուտ և, ըստ էության, չպետք է ընդգրկվի վերջինիս կազմում:

### Աղյուսակ 1 Հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում

Ֆուզանիշ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
1. ՀՆԱ (մլրդ դրամ)	1624.8	1907.9	2242.9	2656.2	3148.7	3568.2	3141.6	3460.2	3776.4
2. Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	227.4	267.0	321.5	385.1	505.5	634.5	539.9	613.0	654.0
3. Պետական տուրք (մլրդ դրամ)	15.2	10.9	17.3	18.9	21.9	24.0	21.4	23.1	22.4
4. Հարկային եկամուտներ՝ առանց պետական տուրքի (մլրդ դրամ)	212.2	256.1	304.2	366.2	483.6	610.5	518.5	589.9	631.6
5. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (մլրդ դրամ)	44.7	50.8	63.8	75.9	88.4	105.0	102.9	105.3	123.4
6. Զուտ հարկային եկամուտներ (4+5) (մլրդ դրամ)	256.9	306.9	368	442.1	572	715.5	621.4	695.2	755.0
7. Զուտ հարկային եկամուտներ/ՀՆԱ (%)	15.8	16.1	16.4	16.6	18.2	20.0	19.8	20.1	20.0

Բացի այդ, նախկին սոցիալական ապահովագրության վճարները (ներկայիս սոցիալական ապահովության վճարները) իրենց բովանդակությամբ հարկային եկամուտ են և պետք է ներառվեն հարկային եկամուտների կազմում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության հաշվարկման ժամանակ: Դա, անկանոն է, հնարավորություն կտա առավել իրական պատկերացում կազմելու մակրոմակարդակում երկրում առկա հարկային բեռի մասին և հստակեցնելու հարկային քաղաքականության ինմնական խնդիրներն ու նպատակները հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցանկալի մակարդակի ձեռքբերման ուղղությամբ: Եթե նշված նկատառումները հաշվի առնենք, ապա տվյալ ցուցանիշը կենթարկվի որոշակի փոփոխությունների:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս կատարված հաշվարկները, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2003-2007 թվականներին 15.8 տոկոսից հասել է 18.2 տոկոսի: Մինչդեռ, ըստ ներկայումս կիրառվող մեթոդաբնության, հաշվարկների արդյունքում այդ ցուցանիշը նշված ժամանակահատվածում կազմել է 14 տոկոսից 16.1 տոկոսի: Իսկ ահա 2008-2011 թվականներին այն տատանվել է 20 տոկոսի սահմաններում:

Գոյություն ունի մեկ այլ խնդիր ևս, որը որոշակիորեն աղավաղում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը: Խնդիրն այն է, որ հանրապետությունում հաճախառն ներքին արդյունքի կառուցվածքն ունի որոշակի առանձնահատկություններ, ինչն իր համապատասխան անդրադարձն է

ունենում նշված ցուցանիշի վրա: Մասնավորապես՝ վերջինիս կառուցվածքում զգալի բաժին ունի զյուղատնտեսության ոլորտը, որը հարկազատված ճյուղ է: Մեծ բաժին ունեն նաև այն ոլորտները, որոնցում մեծ է ստվերային շրջանառության ծավալը: Այդ ամենը մի կողմից՝ մեծացնում է ՀՆԱ անվանական ծավալը, մյուս կողմից՝ նվազեցնում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Այլ կերպ ասած՝ հանրապետությունում հարկային բերի բաշխումը խիստ անհավասարաշափ է, և եթե բացառենք նշված ոլորտների բաժինը համախառն ներքին արդյունքի մեջ, ապա պարզ կդառնա, որ տնտեսության մյուս ճյուղերի վրա հարկային ճնշումն ավելի մեծ է, քան ցույց են տալիս հանրապետությունում վերջին տարիներին արձանագրվող հարկեր/ՀՆԱ հարաբերակցության պաշտոնական ցուցանիշները: Հետևաբար՝ հանրապետությունում խնդիրը ոչ այնքան հարկային ցածր բերի, որքան դրան դրա անհավասարաշափ բաշխման մեջ է, ինչի պատճառով խախտվում է նաև հարկային բերի արդարացի և հավասարաշափ բաշխման սկզբունքը: Այս առումով, պետք է որոշակի քայլեր իրականացվեն համախառն ներքին արդյունքի կառուցվածքի բարելավման և, ըստ այդմ՝ հարկային բերի հավասարաշափ բաշխման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ հարկային բաղադրականությունը ենթադրում է նաև հարկային համակարգի բարեփոխում, գործող հարկատեսակների, դրանց դրույքաչափերի և հարկման մյուս տարրերի տնտեսագիտական հիմնավորում, ինչպես նաև հարկային վարչարության բարելավում: Ըստ Էռիքյան, սրանք այն ուղղություններն են, որոնք պարտադիր կերպով պետք է ընդգրկվեն հարկային բարեփոխումների շրջանակում և համարի ուսումնասիրության առարկա դառնան:

Այսօր հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից է նաև տարածքային ոչ համաշափ զարգացումը: Գաղտնիք չէ, որ տարածքային զարգացման բնեղացումը լուրջ խոչընդոտ է յուրաքանչյուր պետության բնականոն առաջընթացի համար: Որպես դրա ածանցյալ կարելի է նշել սոցիալական բնեղացումը՝ իր բացասական եւտևանքներով: Էական տարբերություններ են առաջանում նաև պետական եկամուտների ապահովման գործում առանձին տարածաշրջանների մասնակցության առումով: Այս ուղղությամբ, կարծում ենք, կարևոր քայլ կարող է լինել ըստ առանձին տարածաշրջանների հարկային ներուժի գնահատումը: Դա հնարավորություն կտա որոշակի պատկերացում կազմելու տվյալ տարածաշրջանի զարգացման հենարավորությունների մասին և համապատասխան քաղաքականություն մշակելու այդ ուղղությամբ: Ի դեպ, պետք է նշել, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է բյուջեների ծախսերի տարածքային դասակարգում, այսինքն՝ ծախսերի խմբավորում՝ ըստ հանրապետության վարչատարածքային միավորների (մարզեր և համայնքներ): Այս առումով նպատակահարմար է կատարել նաև հարկային եկամուտների տարածքային դասակարգում և, ըստ առանձին մարզերի, հարկային ներուժի գնահատում:

Ամփոփելով նշենք, որ առաջկա տարիներին պետական բյուջեի եկամուտների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք բաղաքականության հիմնական խնդիրներից մեկը պետք է դառնա հարկային համակարգի այնպիսի բարեփոխումը, որը պետական գործառույթների ֆինանսա-

կան ապահովածության և տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար զարգացման խթանների և պայմանների արագացման երաշխիք կհանդիսանա:

## НАРЕК ГЕВОРКЯН

Магистр факультета экономики ЕГУ

*Основные тезисы налоговых реформ Республики Армения в качестве наследства от советского периода.*- В странах с переходной экономикой налоговая система находится под воздействием ряда факторов. В этой связи, разрабатываемая и осуществляемая налоговая политика характеризуется некоторыми особенностями и проблемами, с решением которых обусловлено повышение эффективности налоговой системы, что можно группировать в следующем порядке:

- за счет снижения объемов теневой политики повышение уровня налоговых прибылей относительно ВВП, твердое осознание выполнения государственных обязательств среди налогоплательщиков, повышение эффективности налогового администрирования,
- постепенное повышение удельного веса прямых налогов в структуре налоговых прибылей, внедрение гибких механизмов расчета и взимания подоходного налога и налога на прибыль, повышение уровня рентабельности деятельности хозяйствующего субъекта,
- осуществление комплексных реформ налоговой системы и в этом контексте разработка и реализация новых подходов в направлении повышения эффективности и усовершенствования налогового администрирования, снижение административных расходов.

Необходимость долгосрочного развития страны требует разработку среднесрочной и долгосрочной стратегий направленных на решение перспективных задач. Один из принципов, лежащих в основе налоговой политики, должно быть обеспечение сплошного применения налоговой законодательности, правильная оценка налоговых обязательств и сбор налогов с минимальными административными затратами.

Осуществление эффективной налоговой политики в Республике Армения подразумевает также реформы налоговой системы, экономическую обоснованность действующих видов налогов, их тарифов и других элементов налогообложения, а также – усовершенствование осуществляющего налогового администрирования.

Суммируя, считаем необходимым отметить, что в ближайшие годы одной из основных задач осуществляющей политики по направлению сбора налогов для госбюджета должна стать такая реформа налоговой системы, которая бы была бы гарантом развития стимулов и предоставления условий для финансового обеспечения государственных функций и субъектов, осуществляющих экономическую деятельность.

## **NAREK GEVORKYAN**

*Master's Degree at the Department of  
„Economy”, YSU*

### ***Main Provisions of the RA Tax Reforms as a Legacy from the Soviet Period.***

**Period.**- Obviously, the taxation system bears the influence of various factors in transition economies. Thus, the taxation policy carried out and implemented is described with several peculiarities and issues, and taxation system effectiveness raised is dependent on the solution of the above-mentioned. Those issues can be grouped in the following way:

- the increase of tax income level towards GDP parallel to the decrease of the volume of shadow economy consciousness settlement of implementing obligations with respect to state amongst tax payers, increase of tax administration effectiveness,
- gradual rise of specific weight of direct taxes in the structure of tax incomes, flexible mechanisms investing in calculations and collections of income tax and profit tax, profitability level increase of economic subjects' activity,
- complex reforms implemented within taxation system, which carry out new approaches and decline of administrative expenses.

The necessity of country°s long-term development during tax reforms requires mid-term and long-term strategy planning directed to the solution of long-term issues. Obviously, in the present development period of the republic the implemented taxation policy should take into account the above-mentioned peculiarities. One of the basic principles lying in the base of tax system should be the provision of tax legislation global enforcement, the right valuation of tax obligations, as well as tax collection with minimum administrative expenses.

Proper attention should be paid to carrying out tax mechanisms directed to agriculture in the sphere of taxation in the nearest future in our country.

In our republic the basic problem is not so much in low tax weight, as in its unequal assessment, and as a result, the principle of just and equal assessment of tax weight also breaks down.

The effective tax policy implementation in the Republic of Armenia also presupposes tax system reform, economic substantiation of existing tax types, their rates, and other elements, as well as improvement of implemented tax administration.